Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 956 — ՀԻՆԳՇԱԲԹԻ 12 ՄԱՐՏ 1887 — 24 (Ն. Տ.) ՄԱՐՏ 1887 — 27 ՃԷՄԱԶԻՒԼ ԱԽԸՐ 1304

20 ՓԱՐԱ (ՃՇՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՌԱՒԱՏ ԿԱՄ ՕՐ ԵՒ ԹՇՆԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂՈՒԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՏԱՆ ՕՐԱԳԻՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ԳԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ (ՃՇՆՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԳԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան գահեկան արժէք	160
» » Վեցամսեայ » »	80
» » Քառամսեայ » »	40
Դուրսը՝ Եւրոպայի Թղթատարով Տարեկան » »	240
Դուրսը՝ Հնդիկ եւ Ամերիկայ Թղթատարով Վեցամսեայ » »	120
Օտար երկիրներ, առ եկան Քրանց	56
» » Վեցամսեայ »	28

Դուրս ղրկուած յրագրոց Վարձը ծախքը Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեան ղրկուած Նամակ կամ գրութիւն եւ չտրուիր.

Les annonces sont reçues à l'Eastern Agency place Karakeuy Deïrmen Han Constantinople.

Կ. ՊՈԼԻՍ, 12 ՄԱՐՏ, 1887

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍՐՏԱՑՈՂՋ ԴԱՏ ՄԸ կը զբաղեցնէ այսօր Հայոց Հնդկաստանն ու Մեծն Բրիտանիան։ Դատին դիւցազնուհին է մանկամարդ Հնդկուհի մը, նիւթն է Հնդկաց ամուսնական օրէնքն, և դատաւորներն են անգլիացի օրէնսգէտներ։ Գործին պարագաները անծանօթ չեն Արեւելքի ընթերցողաց։ Օրիորդ Ռուքմիպայ, հնդիկ աղջիկը, մինչ 11 տարեկան էր, հնդկային սովորութեան համեմատ պսակեցաւ իրմէ քանի մը տարեկան մեծ պատանւոյ մը, բայց իւր հօր տունը մնաց, մինչեւ չափահասութիւն։ Մինչ հօրը տան մէջ էր, Օր. Ռուքմիպայ ստացաւ անգլիական բարւոք կրթութիւն մը, և քանի մը տարի ետքն եղաւ բարեկիրթ, գեղանի, յոյժ ուսեալ օրիորդ մը, ոչ իւրք տարբեր եւրոպացի օրիորդէ մը։ Ցարի ուկէս առաջ «Հնդկուհի» ստորագրութեամբ նամակներ հրատարակեց Թայմս Օվ Ինդիա անգլ. լրագրոյն մէջ, բացատրելով հնդկային իգական սեռին ընկերական խեղճութիւններն, որք արդիւնք են աղջկանց տղայ հասակի մէջ բռնի ամուսնանալուն, և անդամմը այրի մնացող կանանց ամեն ընկերային իրաւունքներէ զրկուելուն, և նոր ամուսնութենէ մը արգիլուելուն։ Ոչ միայն 7–8–9 տարու աղջիկներ կը պսակուին, զի չպսակուած մնան ընկերային մեծ նուաստութիւն և կրօնական մեղք է Հնդկուհւոյ մը և նորա ընտանիքին համար, այլ եթէ պսակուելէ յետոյ՝ տակաւին կին չեղած՝ իրենց անուանական այրերը մեռնին, խեղճ աղջիկները կը նկատուին այրիացեալ, թէպէտ կոյս, և այրիներու յատուկ օրէնաց համեմատ ո՛չ կա կրնան կարդուիլ, և իրենց բոլոր կեանքը ագոյ մէջ անցուցանել կը դատապարտուին։ Հայր մը, եթէ չուզեր իւր բոլոր դրացեաց և բարեկամաց քով իւր ընկերային դիրքը կորուսանել, պարտի ըստ կարի կանուխ պըսակել իւր դուստր, և եթէ յարմար մէկը չգտնէ, անյարմար մէկը պէտք է գտնէ։ Շատ մը անչահ մարդիկ կաշառք կը տանան քաղաքի մը մէջ աղջկան մը փեսայ լինելու համար, և ուրիշ քաղաքի մը մէջ ուրիշի մը ամուսին կը լինին, և այսպէս Հնդկաստանի մէջ ծայրէն միւսը պսակուելով կը պտրտին, և որովհետեւ ի վերջոյ մէկ աղջիկ միայն կառնուն, միւսները, կարծեցեալ փեսին հետը կորուսանելով, «այրացման» բոլոր աղեռից կ'ենթարկին մանուկ հասակէն։

Անցեալ տարի, Օր. Ռուքմիպայի անուանական ամուսինը պահանջեց որ այլ ևս գայ կենակցիլ իրեն հետ։ Օրիորդը մերժեց։ Հնդիկը բողոք բարձաւ Պոմպայի անգլիական դատարանին։ Պ. Իին հի դատաւորն համակրանօք մտիկ ըրաւ Օրիորդին, որ կը բացատրէր թէ իրեն ամուսին լինել ուզող երիտասարդը չի կրնար ամուսին ընդունիլ։ Թէ այդ երիտասարդ, հասարակ Բո՛ւէ մը կամ ստորուկ բանւոր մը, անկարող է կին մը պահելու։ Թէ բոլորովին ոգէտ է և տմարդի։ միանգամայն թոքախտաւոր է, ըստ բժշկային վկայութեան։ Դատաւորը վճռեց թէ բարբարոսութիւն պիտի լինէր դատապարտել օրիորդը կին լինելու այնպիսի մարդու մը, և մերժեց Հնդիկ երիտասարդին պահանջումը։

Դատին երբը թէպէտ ուրախացուց Հնդկաստանի ազատասէրները, մանաւանդ եւրոպացիներն, անհաճոյ եղաւ Հնդկաց կրօնական դասուն և հասարակ ժողովրդեան ընդհանրապէս։ զի հնդկային ամուսնական օրինաց համեմատ, քանի որ Օր. Ռուքմիպայ պսակուած էր երիտասարդին հետ, պարտէր նորա կինը լինել, երբ ալ ուզէր նա։ Թէպէտ օրիորդը կը բողոքէ թէ հաւանած չէր ամուսնութեան, բայց հնդկային ամուսնական օրինաց համեմատ, աղջկան խօսքը չի լսուիր, և նորա հաւանութիւնը պայման չէ պսակին օրինաւորութեան։

Հնդիկը վերաբնութիւն պահանջեց, և այս օրերս անգլ. երկու նշանաւոր դատաւորներ վերստին մտիկ ըրին երկու կողմերը։ Դատաւորք, խորին համակրանք յայտնելով հանդերձ Օրիորդին, պարտ համարեցին հուչակել թէ Պ. Բինհի դատաւորը սխալ մեկնած է Հնդկաց ամուսնական օրէնքն, որուն համեմատ պարտէր վճռել Հնդկաց միջեւ ծագած ամուսնական դատ մը։ Հետեւապէս, խնդիրն յանձնուեցաւ ուրիշ նախնական դատարանի մը։ Օր. Ռուքմիպայ և իւր ինքնակոչ Քուլի ամուսին ուրեմն ներկայացան անգլ. դատաւոր Պ. Ֆարրանի։ Ռուքմիպայի փաստաբանը կրկնեց թէ Օրիորդն երբեք հաւանած չէր ամուսնութեան, և երբեք իւր ամուսինը չէր նկատած զՔուլին։ Թէ սա տգէտ, խեղճ, ադքատ մարդ մ'է, միանգամայն ախտաւոր, և եթէ դատարանը վճռէ թէ օրիորդը կին լինի այնպիսի մարդու մը, Ռուքմիպայ դարձեալ չպիտի կրնայ հնազանդիլ, և անհնազանդութեան հետեւանքը կրելու պատրաստ է։ Պ. Ֆարրան յայտարարեց թէ ինք, այրի առջեւ ունենալով հնդկային օրէնքն, որուն համեմատ պարտի վարուիլ այսպիսի դատի մը մէջ, ուրիշ բան չի կրնար ընել բայց եթէ վճռել թէ Օր. Ռուքմիպայ պարտի մինչեւ մէկ ամիս երթալ իւր օրինաւոր ամուսնոյն տունն, և լինել նորա կինն։ Եթէ չհնազանդի, վոյ ամիս բանտ պառկիլն աչք առնելու է։

Բովանդակ հնդիկ հասարակութիւնը գոհ եղաւ այս վերջնական վճռէն։ Հնդկաստանի համար քաղաքական ազատութիւն պահանջող հնդկային նոր սերունդն իսկ, համոզեալ թէ ազգային կրօնին դպչող նորութիւններէն պէտք է զգուշանալ, Օր. Ռուքմիպայի հակառակ էր, և նորա պարտութեան համար ուրախութիւն կը յայտնէ։ Միայն Պարս կամ Բարսի հրապարակագիր մը, ընկերներուն մէջ, կը հաստատէր Օրիորդին ջատագովութիւնն առանձնել։ Բայց հնդկային օրէնքն իւր բաղադրեան բովանդակ զօրութեամբ հանդերձ չպիտի կրնայ ընկճել եւրոպական կրթութեամբ ուժգնցած կանացի հաստատամտութիւն մը։ —Օրիորդ Ռուքմիպայ յանձն կառնու բանտ պառկիլ վեց ամիս, և իւր չուզած մարդուն և իրեն անարժան Քուլիի մը կին չպիտի լինի երբեք։ Վեցամսեայ բանտարկութիւն մը, ո՛րչափ ևս ծանր, անհամեմատապէս թեթեւ է բան բովանդակ կեանքի մը խեղճութիւնն ու անարգութիւնն։

Այս դատ բնականապէս շատ համակրանք կը շարժէ թէ ի Հնդկաստան և թէ յԱնգլիա։ Հնդկաստանի անգլ. լրագրերը յօդուածներ և նամակներ կը հրատարակեն, և ի Ոմպայ ձեռնարկուած է հանգանակութիւն մը բանալ ի նպաստ քաջարի օրիորդին։ Մինչեւ որ, Կրսեն Անգլիացիք, Հնդկաց ամուսնական անտեղի եւ անարդար օրէնքը բարեւորոգելու ժամն հնչէ, պէտք է գործնականապէս ոյժ տալ այդ օրինաց զոհերուն բրած ազատագրութեան ճիգերուն։ Դիքբախտապէս, 30 դարերու նուիրագործուած ունեցող հաստատութիւն մը մէկ քանի դատերու պատճառաւ շուտով չի կրնար կործանիլ։ Հնդկաց ամուսնական օրէնքին ամենէն անարդար տրամադրութիւնները քաղաքային օրէնսդրութեամբ մը ջնջելու առաջարկն, որոյ վրայ երկար ժամանակէ հետէ կը խորհի անգլ. հնդիկ կառավարութիւնը, վերջերս մատուցուեցաւ Լորտ Տրֆրէնի նկատողութեան։ Ն. Բարձրութիւն վճռեց թէ պէտք չէ դպչիլ Հնդկաց կրօնային և ընկերային օրինաց ու սովորութեանց, ո՛րչափ ևս վնասաբեր լինին Հնդիկներու։ զի օտար ազգի մը ձեռամբ ներմուծեալ ամեն բարեւորոգում, ո՛րչափ ևս օգտակար, կրնայ բախիլ միլիոնաւոր ժողովրդի մը նախապաշարմանց։ Պէտք է միայն հոգ տանիլ Հնդկաց կրթութեան, և աւելի լուսաւորեալ սերունդ մը ինքնին կրնայ ձեռնարկել հնդիկ ընկերութեան ներքին բարեւորոգման։ Փոխարքային այս պահպանողական տեսութիւնը շատ հաւանութիւն կը գտնէ Անգլիոյ մամլոյն մէջ։ Տարակոյս չկայ սակայն թէ Օր. Ռուքմիպայի նման հերոսուհիներ պիտի փութացնեն Հնդկաց ընկերային և կրօնային նախապաշարմանց տակաւ բարձումը։

ՖՐԱՆՍԱ. Երեսփ. ժողովը մարտ 14ին 248ի դէմ 318 քուէով ընդունեց օտար երկիրներէ բերուած ցորենին վրայ մաքսը 3 ֆր. էն 5 ֆր. ի բարձրացնող օրէնքն, որով մաքսի համապատասխան յաւելուած մը կը լինի միւս արմտեաց և ալիւրի վրայ ևս։ Այս օրէնքին քուէարկումը 40 տարիէ հետէ Ֆրանսայի ամենէն յետադիմական տնօրինութիւնն է ի մասին տնտեսական խնդրոց։ Մեծամասնութիւնը կը բաղկանար 180 Միապետականներէ ևս, իբր 130 Հանրապետականներէ, և ի պատիւ Արմատականաց պէտք է ըսել թէ առնոնցմէ ո՛չ ոք քուէարկեց այս Հանրապետականաց հետ։ Նախարարներէն երեքն հակառակ քուէ տուին իրենց երկրագործական պաշտօնակցին առաջարկած մաքսի յաւելման, և Նախարարապետը ձեռնպահ կեցաւ։ Մաքսի յաւելումը պահանջողներուն գլխաւոր փաստն էր թէ գործարանատերք արդէն ձեռք բերած լինելով տարագործական արտադրութեանց վրայ մաքսի յաւելում մը, հողագործներն ևս իրաւունք ունին պաշտպան դրուելու։ Եթէ Պերլինի հետ կնքուած չլինէր առեւտրական դաշնագիր մը, որուն համեմատ դաշնագիրը կը կնքուին ուրիշ ազգերու հետ, գործարանատերք պիտի պահանջէին մաքսերու նոր յաւելում մը, այնու առարկութեամբ թէ հայը պիտի սղի և հետեւապէս գործաւորաց վարձքերը պիտի բարձրանան՝ արմտեաց վրայ մաքսերուն յաւելմամբ։

—Մարտ 15ին հրատարակեցաւ կարգի խարդախման դէմ Խորհրդարանին հաստատած նոր օրէնքն, որով 6 օրէն մինչեւ 6 ամիս բանտարկութիւն և 50 ֆր. էն մինչեւ 3,000 ֆր. տուգանք կը սահմանուին խարդախեալ կարգաց իբրեւ անխառն կարագ գիտութեամբ վաճառողներուն, կարագը շինողին կամ վաճառողին անունը ծածկելն ևս պիտի համարուի գիտութեամբ վաճառել խարդախեալ կարագ։ Երբ վաճառուած կարագն անխառն կարագ չէ, պէտք է որ խոշոր տառերով արձանագրուի տակառին վրայ, իբրեւ ֆրէշ-ին, օլեոմարկարին, կամ անոնցմէ մէկ մասը։ Կառավարական պաշտօնեաք պիտի հսկեն խանութներու մէջ վաճառեալ կարագին վրայ, որպէս զի խարդախեալը չկարենայ մրցիլ անխառն կարագին դէմ։ Այս օրէնքը դրուեցաւ գլխաւորապէս ի խնդրոյ երկրագործաց, որք կը դանգատէին թէ շինծու և հետեւապէս ածան կարագներ արգելք կը լինին իրենց անխառն ապրանքին վաճառման։—Ֆրանսայի ընդունած պատուական օրէնքին նմանեցին Անգլիոյ, Հոլլանտիոյ և Դերմանիոյ մէջ ևս հաստատեցան, կամ հաստատուելու վրայ են։ Կ'արժէ որ Օսմ. Կայս. Կառավարութիւնն ևս, որ խարդախեալ կարագի խնդրոյն վրայ ուշադրութիւն դարձուցած է արդէն, այսպիսի խիստ օրէնք մը սահմանէ, որպէս զի խարդախեալ կարագն իբրեւ հարազատ ապրանք վաճառելով՝ հասարակութեան քսակին և մանաւանդ առողջութեան մշտատեւ վնաս մը չպատճառէն շահադէտ վաճառականք։ Խառն կարագ կրնայ վաճառուիլ. բայց գնող միամիտ հասարակութիւնը պէտք է գիտնայ թէ ի՞նչ տեսակ ապրանք կը գնէ։ Մեր Թուրքիացի ժողովուրդ Ֆրանսայի ժողովուրդէն աւելի ուշիմ չի կրնար համարուիլ, և Ֆրանսացի ժողովուրդը, շնորհիւ նոր օրէնքին, կարող պիտի լինի որոշել ղուտ կարագը խառն և շինծու կարագէն։

—ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԻՍ 1889 Ի. Մարտ 15ի նախարարական խորհրդին մէջ, Պ. Ֆլուռէնս կարդաց Ֆրանսական դեսպաններուն ուղղելի շրջաբերականի մը պատճէնն, որով Տերութիւնք կը հրաւիրուին մասնակցելու 1889ի Արուեստահանդիսին, կամ՝ պաշտօնապէս և կամ պարզ Բոյլոուութիւն շնորհելով իրենց հպատակաց, որպէս զի մասնակցին Բարիզեան Արուեստահանդիսին։ Պ. Ֆլուռէնս ծանոյց թէ Տերութեանց կամքն արդէն հարցուած լինելով, Իտալիա, Բունասան, Սպանիա, Սբանտինավիա, և հաւանօրէն Անգլիա պաշտօնապէս պիտի մասնակցին ֆրանսական առաջիկայ Արուեստահանդիսին, և Աւստրիա, Ռուսիա և Դերմանիա, եթէ պաշտօնապէս Պատուիրակներ չկարգեն, թող պիտի տան իրենց գործարանատերաց և վաճառականաց՝ կազմելու մասնակցութեան հարկաւոր միջոցները։ Միաց։ Նահանգք, Մեքսիքա, Հարաւ. Ամերիկա, Չին և Ճաբոն պաշտօնապէս ներկայացուցիչ պիտի ղրկեն։

—ՌՈՒՍԻԱ ԵՒ ԿԵԴՐ. ԱՍԻԱ. Տեղ կը հրատարակէ իւր Թղթակից Պ. Պոնվարոլի Սմրզանտէ ղրկած մէկ նամակը։ Պ. Պոնվարո, որ Կեդր. Ասիոյ շատ մը կողմերը պտտած և քննած է գիտնականի մը աչքով, ռուսահպատակ Թուրքեստանի վիճակը կը բաղդատէ Պուխարայի անկախ Պետութեան վիճակին հետ։ Ի Պուխարա ժողովուրդն ենթակայ է ամեն տեսակ կեղեքմանց, և հետեւապէս հարկադրեալ է սքօղել իւր հարստութիւն։ Եմիրն երբ դրամի պէտք ունենայ, չի վարանիր դրամ պահանջել իւր ան հպատակներէ սրբ դեղեցիկ տուն ունին եւ կր հարձակին գեղեցիկ զգեստ հագնիլ։ Իսկ ռուսական սահմանաց մէջ, ժողովուրդն, ընդհակառակն, կատարեալ ապահովութիւն կը վայելէ։ Ռուսահպատակ Թուրքեստանցի մը եթէ բերրի հող մը կը մշակէ և ժամանակին կառոգէ, ապահով է թէ անդորը կեանք մը պիտի վարէլ։ Դիտէ ճշդիւ թէ ի՞նչ պիտի վճարէ Տերութեան, և հարստութիւն դիզելովն ինքզինք վտանգի կամ ՀԱՍԱՍ չենթարկեր։ Ուստի, չի վախնար լաւ տուն մը շինել և գեղեցիկ զգեստ մը հագնիլ տօնի օրեր։ Պուխարայի ժողովուրդը կը նախանձի Ռուսահպատակաց վիճակին, և կը բաղձայ Պուխարայի ևս ռուսական իշխանութեան ենթարկուելուն։ Մոլլայք թէեւ կ'ըսեն թէ Ռուսաց դէմ կրօնային պատերազմ պիտի քարոզեն, բայց պուխարացի ժողովուրդը նախամեծար կը համարի այլակրօն Տերութեան մը հպատակութեամբ ապահովութիւն և հարստութիւն գտնել, քան իրենց ազգակից և կրօնակից Էմիրի մը ներքեւ կեղեքուիլ։—Բնիկները շատ կը հետաքրքրին եղեր Ռուսերուն շինած երկաթուղւոյն, և կուզեն եղեր գիտնալ թէ ի՞նչպէս կարելի է երկաթներն հաստատել դիւրաւոր աւազին վրայ, և Ամու գետին վրայէն անցուցնել։ Բնիկները կը կարծեն թէ պատերազմը մօտաւոր է, եւ հետաքրքրութեամբ հարցուցեր են ֆրանսացի գիտնականին թէ Անգլիա՞ թէ Ռուսիա յաղթող պիտի ելնէ։

—ՄԱՐՈՒԻ մայրաքաղաքին մէջ, ի Թանձէր, մարտ 13ին, Թնդանօթներու արձակումէ յետոյ, մզկիթներուն մէջ կարդացուեցաւ Մարգի Սուլթանին մէկ նամակն, որով Ծխախոտի և ոգելից ըմպելեաց գործածումը կարգիլուի։ Քանի մը ժամ յետոյ, գմբուեցան երկու մարդոցի զինուորներ որք ափիոն կը ծխէին։ Զերբակալուեցան և չղթայակապ բանտարկեցան։ Ուրիշներ բանտարկեցան զի Ծխախոտ կը գործածէին, և չարաչար գանակոծեցան։ Ծխախոտի պետական մենաւաճառը Չնչուեցաւ։ Քթախոտի և Ծխախոտի խանութք փակեցան, և այս կարգի շատ մը ապրանք հանդիսապէս այրեցաւ հրապարակին վրայ։ Իշխանութեան կողմէ քաջալերմամբ, շատ մը մարդոցի տղաք, թափոր կազմած, և քթախոտի աղտոտ կրող թաշկինակներ ձողերու դագաթն անցուցած, շրջեցան քաղաքներու մէջ, անիծելով քթախոտը, ծխախոտն և ափիոնն, և գոչեցան տալով Մարգի Սուլթանին անօրինութեան։ Դատապարտեալ Մարոցիք ոմանք պիտի մերկացուին և իշու վրայ կապուած՝ փողոցները պիտի պտրտցուին, միանգամայն խարազանի հարուածներ ընդունելով։ զի համարձակած են Վեհապետին արգելքին հակառակ գործել։ Դիքգոհութիւն կարտայայտուի ժողովրդեան մէջ, որ կը գանգատի թէ ծխելուն համար աղքատը միայն կը գանգատուի, իսկ հարուստին աչք կը գոցուի։

—ԱՖՂԱՆՍՏԱՆ. Հնդկաստանի Կառավարութիւնն, իմանալով թէ նոր և ծանր խռովութիւնք կը պատրաստուին յԱֆղանստան ռուս գործակալաց ձեռամբ, հրամայեց որ զօրաբանակ մը ղրկուի սահմանագլխոց վրայ, ի Բիչին, յայտնութիւն Էմիրին, բայց առ այժմ չմտնէ աֆղանեան հողը։

—ՊԻՐՄԱՆԻԱ. Դիքբախտ Մանտալէ վերջապէս հրկիզեցաւ մարտ 16ին։ Հրդեհը քանի մը ժամեր տեւեց, և մեծ վնաս պատճառեց եւրոպացի և բնիկ վաճառականներու։

—ՌՈՒՍԻԱ. Զարին Հօրեղբայրը Մեծ-Դուքս Կոստանտին Նիքոլայեվիչ, որ կայսեր հրաւիրմամբ Խրիմէն Բեռերոպուրկ գացած է, մարտ 15ին վերադարձաւ և առանձնացաւ ի Խրիմ, ըստ առաջնոյն։

—ՎԱՏԻԿԱՆ. Պապը նամակ մը ղրկեց Վիլհելմ Կայսեր, ծննդեանն 90րդ տարեդարձին առթիւ շնորհաւորելով զնա, և յայտարարելով թէ, Պապութեան այժմեան պայմանք թէպէտ իրեն թող չեն տար իբրեւ աշխարհական անկախ Տերութիւն յատուկ ներկայացուցիչ մը ղրկելու, բայց կը յուսայ թէ իւր անկեղծ բարեմաղթութիւնք ո՛չ նուազ ընդունելի կը լինին Ն. Կ. Վեհափառութեան։

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ռուսի Կարգերի մէջ կը կարդանք հետեւեալ ուշադրաւ խմբագրականը։

«Վերջին տարեսպասի միջոցին ամեն ոք առանձնապէս ժողովրդ է եւրոպական պատերազմին դիտաւորութեամբ, նոցա սպառազինմամբ և զինուորական զօրութեամբ։ Սակայն ո՛չ նուազ և դեռ ևս առաւել կարեւոր է ի նկատ առնուլ նոցա ներքին կացութիւնը, նոցա տնտեսական վիճակն, ըստ ազգաբանութեան։

«Ամենէն Մէնթեր Պ'Ինդոյէն նկարագրած տեսարաններէն մին, ըսաւ տոքթորն։ Անմոռանալի չէր կրնար աւելի տպաւորիչ նկարել զայս լեռներ։

—Սուգիս, պատասխանեց ծոյէ, չէի ուզեր գիշերը միայնակ պտրտիլ այդ խօլականաց երկրին մէջ։ Եթէ չատ ծանր չլինէր, հեռս Սոյմտա կը տանէի զայս դաշտանկար, որ յոյժ գեղեցիկ տեսարան մը կը կազմէր Լամնտա լճին եզերաց վրայ, եւ հետաքրքիր ուղեւորք հոն կը դիմէին գունդագունդ։

—Մեր ոգեպարիկը բաւական մեծ չէ որպէս զի թոյլ տայ քեզ գոհացնել զայդ քմահաճոյք։ Բայց կը թուի ինձ թէ մեր ընթացքը կը փոխուի։ Այս տեղի գեւերն յոյժ բարեբարոյ են, հարաւային արեւելեալ թեմեռ հով մը կը փչեն, որ նորէն լաւ ճանրու մէջ պիտի դնէ զմեզ։»

Արդարեւ Վէյնոբլա կ'սկսէր առաւել դէպ ի հիւսիս երթալ, եւ 20ին առաւօտուն՝ ջրանցներու, հեղեղատներու և գետակներու անել ցանցի մը վրայէ կ'անցնէր, որ Նիկէրի օժանդակներուն կատարեալ թեմեռներն էր։ Այդ ջրանցներէն մի քանին՝ թաւ խոտով ծածկեալ պարարտ մարգագետիններու կը նմանէին։

(Շարունակելի)

—)(64)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԷՐՆ

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԻԿՈՎ

ԵՐԿԱԹՈՒԶԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ
ԵՐԵՔ ԱՆԳԼԻԱՑԻՈՅ ՅԱՓԻՒԿԷ

ՊՍԱԿԵԱԼ Ի ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԵՄԱՐԱՆԷՆ

ԳԼՈՒԽ ԱԼ.

—Էհ, էհ, չա՞տ դիւրին, պատասխանեց տոքթորն։ Եթէ հաւատանք աւանդութեան, ով որ այդ ակին վրայէն ցատկելու փորձ ընէ, անմիջապէս կը խորասուզի, եւ ով որ անտի ջուր առնուլ ուզէ, ետ կը մղուի աներեւոյթ ձեռքէ մը։

—Եւ ներելի չէ՞ այդ աւանդութեան ո՛չ մէկ բառին հաւատալ, հարցուց Ժոյէ։

—Ներելի է։ Հինգ տարի յետոյ, Լէնկի հաւարապետը, Սահարայի անապատը մտնելով, մինչեւ Թէմպուքթու հասաւ, եւ անտի քանի մը մղոն վեր խեղդամահ սպանուեցաւ Ուլատ Շիմանիներէն, որք կ'ուզէին մահմէտական լինելու հարկադրել զայն։

—Աւատիկ զո՞հ մ'ալ, ըսաւ որսորդն։

—Յայնժամ բաղարի երիտասարդ մը, իւր տիրոջ միջոցներով արշաւանք մ'ընելու ձեռնարկեց, եւ արդի ուղեւորութեանց ամենէն զարմանալին կատարեց։ Խօսքս Ռընէ Բայլիէ Ֆրանսացւոյն վրայ է։ 1819 ին եւ 1824 ին այլ եւ այլ փորձեր ընելէ զլնի, 1828 ապրիլ 19 ին նորէն ճանրայ եղաւ Բիլդ-Նուէլզէն օգոստոս 2 ին Թիմէ հասաւ, այն տարիման ուժասպառ եւ հիւանդ վիճակի մէջ, որ հոգիս կրցաւ վերստին շարունակել ուղեւորութիւնը վեց ամիս յետոյ, 1828 յունվարի մէջ։ Այս անգամ կարաւանի մ'ընկերացեցաւ, և իւր արեւելեան զգեստին պաշտպանութեամբ մարտ 10 ին հասաւ ի Նիկէր, մնաւ ի ժէննէ քաղաքն, եւ գետին վրայ նաւ նստելով ի՛նչ մինչեւ ի Թէմպուքթու, ուր հասաւ ապրիլ 30 ին։ Ուրիշ Ֆրանսացի մ'ալ, Լենգա, 1670 ին։ եւ Անգլիացի մը, Թոպէրթ Ատամս, 1810 ին, տեսած էին թերեւս զայդ հետաքրքրաշարժ քաղաք։ բայց Ռընէ Բայլիէ՝ առաջին եւրոպացին է որ ճիշդ տեղեկութիւններ բերած է անոր վրայ։ Մայիս 4 ին մեկնեցաւ անապատին այդ թագուհիէն, 19 ին հասաւ յԷլ-Արաուան վաճառաշէն քաղաքն։ անտի ճանրայ եղաւ, բիւր վտանգներով անցաւ այն ընդարձակ անապատներէն, որք Սուտանի եւ հիւսիսային Ափրիկէի միջեւ տարածուած են, վերջապէս հասաւ ի Թանձէր, եւ սեպտեմբեր 28 ին նաւ նստաւ Թուլոն երթալու համար։ Տան-ինն ամսոց մէջ, հարիւր ութսուն օր հիւանդութիւն կրելով հանդերձ, Ափրիկէի արեւմտեան ծայրէն մինչեւ հիւսիսային ծայրը պտրտեր էր։ Եթէ Բայլիէ Անգլիոյ մէջ ծնած լինէր, մեծ փառք եւ պատիւ կ'ստանար Մուռնկոյ-Բարքի պէս, իրեւ արդի ժամանակաց ամենէն քաջայանդուգն ուղեւորը։ Բայց Ֆրանսայի մէջ գնահատուած չէ ըստ արժանին։

—Յիրաւի քաջայանդուգն ընկեր մ'էր, ըսաւ որսորդն։ Եւ ի՞նչ եղաւ յետոյ։

—Կրած դժնդակ յոգնութեանց հետեւանքէն մեռաւ երրորդ-ին տարեկան հասակին մէջ։ Աշխարհագրական ընկերութիւնն ըստ բաւականի զայն փարձատրել կարծեց 1828 ին իւր մրցանակն ընծայելով, մինչ դեռ Անգլիոյ մէջ ամենամեծ պատիւներ կրնային տրուիլ նմա։ Մնաց որ, երբ Բայլիէ կը կատարէր զայս հրաշալի ուղեւորութիւն, Անգլիացի մ'ալ նոյն ձեռնարկը կը յղանար եւ կը փորձէր նոյնչափ քաջութեամբ, եթէ ոչ յաջողութեամբ։ Բլաքէրթոն հարիւրապետն ըսել կ'ուզեմ, Տէյնհամի ընկերն։ 1829 ին Ապրիլէ մտաւ Պէնինի ծոցին արեւմտեան ծովեզրէն, Մունկոյ-Բարքի եւ Լէնկի շաւղաց հետեւեցաւ, առաջնոյն մահուան վերաբերեալ գրութիւնները գտաւ Պուսսայի մէջ, օգոստոս 22 ին Սաքքաթու հասաւ, ուր բանտարկուելով վերջին շունչը փչեց իւր հաւատարիմ ծառային՝ Բրիչարտ Լանտէրի ձեռաց մէջ։

—Եւ այդ Լանտէրն ի՞նչ եղաւ, հարցուց ծոյէ հետաքրքրեալ։

—Յաջողեցաւ ծովեզրն հասնիլ և Լանտրա վերադարձաւ, հարիւրապետին թուղթերն եւ իւր ուղեւորութեան ճշդիւ պատմութիւնը բերելով։ Յայնժամ իւր ծառայութիւնն առաջարկեց կառավարութեան, որպէս զի ամբողջացնէ Նիկէրի աշխարհագրական զննութիւնն, եւ իւր ձեռն եղբարն իրեն հետ առնուլ, որ Բրունսուայկի խեղճ ընտանիքի մ'երրորդ որդին էր, երկուքն ի միասին՝ 1829 էն ց1831՝ դեռն ի վայ իջան Պուսայէն մինչեւ բերանը, նկարագրելով զայն գիւղ առ գիւղ եւ մղոն առ մղոն։

—Ուրեմն այդ երկու եղբարք զե՞ղծ մը նոցին հասարակաց դժբաղդութենէն, հարցուց Քէնիէի։

—Այո՛, գոնէ այս անգամ, վասն զի 1833 ին Ռիչարտ երրորդ ուղեւորութեան մը ձեռնարկեց Նիկէրի վրայ, եւ անծանօթ գնաչէ մը զարնուելով մեռաւ գետարերանին մօտ։ Կը տեսնէք ահա, բարեկա՛մ, թէ այս մեր անցած երկիրը թատր եղած է այնիւ անձնուիրութեանց, որոց մեծ մասը մահուամբ միայն վարձատրուած են։»

ԳԼՈՒԽ ԱԼ.

Նիկէրի պարագրած երկիրը։—Հոմպորի լերանց տարօրինակ տեսքը —Քապրա։—Թէմպուքթու։—Տոքթոր Պարթի յատակագիծը —Վատթարացումն—Ուր որ կամի երկինք։

Նոյն անոնպատ երիտասարդի աւուր միջոցին, Տոքթոր Ֆէրիւսոն, անցած երկրին վրայ յոյժ մանրամասն տեղեկութիւններ տուաւ իւր ընկերաց։ Դիտնին՝ բաւական հարթ՝ բնաւ արգելք չէր հաներ Վէյնոբլի ընթացքն դէմ։ Տարմորին մշակ հոգ պատճառող բանն էր հիւսիսային արեւելեան նշուած հովն, որ կատաղարար կը փչէր և գինքը Թէմպուքթուի կլիմայէն կը հեռացնէր։

Նիկէր, դէպ ի հիւսիս երթալէ յետոյ, մինչեւ ի Թէմպուքթու, կը կլորնայ իրեւ անհուն ջրաբլս մը, եւ Ատլանտեան Ովկիանոս կը թափի լայն ցայտերով։ Երկիրն յոյժ ալաղան է այդ պարագային մէջ, մերթ յորդառատապէս արգաւանդ, մերթ ալ վերջին ծայր խոպան։ Կենդանաներով ծածկեալ անմշակ դաշտեր կը յաջորդեն եղիպտացորենի արտերու։ Ամեն տեսակ ջրաբեր թաչուն, հաւանուն, մրտիմ, ծաղրիկ, տարմատամ կ'ապրին հեղեղատներու եւ ճախնուտներու եզերաց վրայ։

Մերթ ընդ մերթ Թուարկաց բանակեալ մը կը տեսնուէր, այրերը պատրաստեալ իրենց մաչիեայ վրաններուն տակ, մինչ կանայք դուրսի գործերուն կ'զբաղէին, մատակ ուլաները կիթելով եւ իրենց խոշոր ծխափողերը քաշելով։

Վէյնոբլա, իրիկուան ժամն ուրթին մի-ջոցներն երկու հարիւր մղոնէն աւելի դէպ յարեւմուտ յառաջացած էր, եւ ուղեւորք յայնժամ՝ չքեղ տեսարանի մը ներկայ դառնուեցան։

Լաւանի քանի մը ճառագայթներն ամպի մը ճեղքին մէջէն ճանրայ բռնելով եւ անձրեւի գիծերուն մէջէն անցնելով՝ Հոմպորի լերանց վրայ ընկան։ Յայնժամ յոյժ տարօրէն տեսիլ մ'ստացան բասանաբարի երեւութով լեռնագագաթներն։ Երեւակայական սուտերազրեր ձգեցին ազատապալ երկնից վրայ, այնպէս որ տեսնողը միջնադարեան անհուն քաղաքի մը պատմական աւերակներ կը կարդէր, ինչպէս որ բեւեռային ծովերու սառնակոյտերը կը ներկայանեն հեռացնէր։

«Ամենիկ Մէնթեր Պ'Ինդոյէն նկարագրած տեսարաններէն մին, ըսաւ տոքթորն։ Անոնց Բէտքիրի չէր կրնար աւելի տպաւորիչ նկարել զայս լեռներ։

—Սուգիս, պատասխանեց ծոյէ, չէի ուզեր գիշերը միայնակ պտրտիլ այդ խօլականաց երկրին մէջ։ Եթէ չատ ծանր չլինէր, հեռս Սոյմտա կը տանէի զայս դաշտանկար, որ յոյժ գեղեցիկ տեսարան մը կը կազմէր Լամնտա լճին եզերաց վրայ, եւ հետաքրքիր ուղեւ

որում անառարկուելի է թէ հակառակորդի պատերազմական խրոխտանոց իրականացումն և դիմադրութեան չափը մինչեւ մէկ ամսուան կախումն ունի նորա եղծանոյցէն և բնաջինջ հետամտութենէն։

«Անտարակոյս ամենէ աւելի կը խրոխտայ Անգլիա որ հակառուս չարաժման հոգին և թելադրիչն է։ Նորա փառքն և զօրութիւնը նաւատորմիղն է։ Ուշագրաւ կէտն այն է որ հարկաւոր պարագային Անգլիա կարող է խաղաղութեան ժամանակ առեւտրական նաւատորմի համար գործածող նաւերը բանակի տրամադրութեան ներքեւ դնել։ Առեւտրական նաւատորմի յարաձումէն դատելով հարկ է ըսել թէ Անգլիոյ ծովային զօրութիւնն, ըստ երեւոյթին, կը մեծնայ չէ թէ օրէ ցօր այլ ժամէ ի ժամ։ Ռուս Թրքական պատերազմէն անմիջապէս յետոյ էր որ Անգլիա այսպէս արտակարգ կերպիւ ակսաւ բազմացնել իւր նաւերը։ Այժմ արդէն Անգլիոյ առեւտրական նաւատորմի մէջ կը հաշուուի 7,889 շոգենաւ։ 1880 է մինչեւ 1886 ի վերջն, այն է 6 տարուան մէջ Անգլիացիք իրենց առեւտրական նաւատորմ մը կրկնակի բազմացուցած են։ Նաւերու այսպիսի քանակութիւն չունի աշխարհի և ոչ մի պետութիւն իսկ եթէ դատելու լինինք ոչ թէ քանակէն այլ որակէն, այն ժամանակ դիւրաւ պիտի տեսնենք որ Անգլիա իւր նաւատորմով այնպէս հզօր չէ, որպէս կարելի է գուշակել նորա նաւերու բազմութենէն։

«Վերոյիշեալ 7,889 նաւերուն 47 %ն, այն կէսէն քիչ նուազ մասն հարիւր թէ գործածութեան օգտակար լինի, իսկ 4,092 շոգենաւերէն շուրջ 2/3 (37 %ը կը գտնուի կատարեալ քայքայման վիճակի մէջ, այնպէս որ այդ շոգենաւերն այլ ևս ոչ կարելի է նորոգել և ուզղել։

«Վերջապէս 2,573 շոգենաւերն հարկ անհրաժեշտ է անմիջապէս նորոգել, եթէ ոչ անկարելի է որ այդ վիճակի մէջ կարողանան յաջողապէս մրցել ուրիշ շոգենաւերու հետ։ Այսպէս ահա Անգլիա թէ եւ նաւերու քանակի կողմէն առաջին տեղը կը գրաւէ, սակայն որակի կողմէ ոչ միայն չի գերազանցեր այլ մինչեւ իսկ բաւական յետ կը մնայ եւրոպական տէրութիւններէն։ Արդ Անգլիա իւր նաւատորմովազատորէն մրցիլ կարենալու համար օտար նաւատորմիղներու հետ, անպատճառ անհրաժեշտ է որ յառաջիկայ տասն տարուան ընթացքի մէջ կառուցանէ նոր ձեւի նաւեր 20,000,000 անգլիական ոսկի արժեքով. և ագ նաւերու կէս մասէն քիչ պակաս անմիջապէս չլինելու է։

«Այսպէս ուրեմն նաւատորմի վիճակը—անգլիական զօրութեան նեցուկը— բնաւ այնպէս չէ որ ընդունակ լինի իրապէս պաշտպանել Բրիտանիոյ հայրենասէրներու պատերազմական եռանդը։

«Անգլիական զօրութեան միւս աղբիւրն, այն է նորա միջազգային վաճառականութիւնը նմանապէս անցեալ կ'երթայ վերջին տարիներս։ Այսպէս 1886 ին վաճառքներու ներմուծումն 5,7 %ով նուազ էր նախընթաց տարւոյ ներմուծումէն։ Արտածումն նմանապէս նուազած է։ Ի բաց առեալ ոստայնանկութեան արտադրութիւնն, անգլիական ճարտարութեան միւս ամէն ճիւղերը կրճատած են իրենց արտադրումը։ Հունձքն ևս կարի ողորմի արդիւնք ունեցաւ անցեալ տարի Անգլիոյ և Իրլանդայի մէջ։ Անգլիոյ մէջ 1886 ին հաւաքուած է ցորէն 16,000,000 պուշել եւ գարի 7,200,000 պուշել նուազ քան նախընթաց տարին։

«Եթէ այս ամենի վրայ աւելացնենք և և այն որ Բրիտանական թագաւորութեան գլխին միշտ կախուած կը մնայ Իրլանդայի սպառնական սուրն, այն ժամանակ դժուար թէ անհաւանական է որ տիպինք մեր այն ենթադրութեան մէջ թէ Անգլիական կարծեցեալ զօրութիւնը շատ խախուտ է եւ հաւանօրէն այդպէս պիտի մնայ ընդ միշտ։ Այս պատճառաւ ահա Անգլիոյ նախարարները մեծ օգուտ մատուցած պիտի լինին իրենց հայրենեաց եթէ խորհին չէ թէ քաղաքական յարմարութիւններու և պատերազմական փառքի վրայ, այլ պետութեան ներքին կազմակերպութեան վրայ, որի հիմերը սասարկ խախտուած են վերջին ժամանակներս։»

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Արսլանպէկի հրկիզելոց նպատամատոյց Ցանձնաժողովն երկէ ի նիստ գումարեցաւ նախագահութեամբ Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հօր և իւր ցարդ կատարած գործառնութեանց արդիւնքը պարունակող տեղեկագիր մը պատրաստեց, զոր պիտի մատուցանէ Խառն ժողովոյ այս աւուր նստին։

Կարնոյ Առաջնորդ Դեր. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան՝ Սամաթիոյ Նորակառոյց եկեղեցւոյ օծման առթիւ հնորհաւորական գիր մ'ուղղած է Պատրիարքական Դեր. Փոխանորդ Հօր որ միանգամայն յիշեալ եկեղեցւոյ քարոզիչն է։

Քանի մը շաբաթ առաջ հայ կին մը, ի ձեռին ունենալով Նաղը Դարուի Թղ. Խորհրդոյ մէկ գիրն, որ իւր պատուհորութիւնը կը վկայէր, Ազգ. Հիւանդանոց երթալով որ աղջիկ մը կը խնդրէ որդեգրելու համար և 15 տարեկան Վերգինէ անուն որբուհի մը կ'առնու։ Կինը՝ փոխանակ աղջիկն որդեգրելու, վատահարաւ տան մը կը յանձնէ զայն։ Պատր. Դեր. Փոխանորդ Հայրը տեղեկանալով սոյն դպրոցական դէպքին, բարապանի մը միջոցաւ աղջիկն Ազգ. Հիւանդանոց վերադարձնել կուտայ և խիստ քննութեան մը կը ձեռնարկէ։ Ն. Դերապատուութիւն բացատրութիւն կը պահանջէ Նաղը Դարուի Թղ. Խորհրդէն որ կը յայտարարէ թէ այդ վիրապերն տուած էր յեղով քահանայի մը կայութեան։ Բնութիւնը կը շարունակի։

Ստացանք ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ ամսագրի չորրորդ տարւոյ առաջին թիւը (մարտ) որ այժմ ի Բեռլին լոյս կը հրատարակուի խմբագրութեամբ Հ. Խորէն Վ. Սահակեանի։ Տեարին պարտականութիւնն է հանուելը։

Դպրոցն ոգին։ — Հնդկաստանի և Բիրմանիոյ հայեր։ — Լազիստանի հայեր։ — Մի երիտասարդ Տրա լիզանի թեմի կրթական վիճակի առթիւ։ — Օտարերկրեայ հասատութիւններ Կիլիկիայում։ — Թուրքիոյ և առանձինն Կոստանդնուպոլսոյ հայ ժողովրդեան արդի վիճակը։ — «Ազգասրաց Անդրանիկ հայ ամուսնիրը» և նրա խմբագիր Յարութիւն քահանայ Շմաւոնեան։ — Հայաստանի աշխարհագրական և ժողովրդագրական մասնակցութիւն։

Մանկավարժանոցի տարեկան բաժանորդագրին է երեք ռուպլի։

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱ, 10 մարտ

Այս երկուշաբթի առաւ Աբեր-Էլի մէջ զարմանօք կարդացի իմ անունս ինչպէս նաեւ իմ պատուարժան մի քանի ընկերակցաց անուններն ի շարս մեզի աշակերտած պատ. անձանց անուններուն՝ իբր առաջին ստորագրի վկայագրի արժանացած, մինչդեռ հարիւր քանի մը տարիէ ի վեր վարժապետական ասպարիզի մէջ գտնուող մեր պատ. պաշտօնակիցք՝ «Ազգային ուսուցչական մարմնոյ» պատուակալ անդամակից առնուած են ի փոխարէն իրենց մատուցած բազմամեայ արդիւնաւոր ծառայութեանց։

Ո՛ որ և ըլլայ այս գնահատութիւն տնողը, մասնաւոր անհատ կամ ազգային պաշտօնական մարմին, շարաշար անիրաւած է արդարութեան դէմ՝ անգիտութեամբ կամ թշնամական ոգւով։

Այդ կը յայտարարեմ միանգամ ընդ միշտ ի լուր աշխարհի թէ ես երբէք չեմ դիմած Պատ. Ուսումն Խորհրդոյ վկայագիր խնդրելու, թէ՝ 24 տարի առաջ, իբր կարող դասատու առած եմ վկայագիր՝ զոր ստորագրած են բարեյիշատակ Ներսէս Վարժապետեան, Մեծ. Մամուրեան, Զիլլինկիրեան, Յարութիւն Նէվզատեան եւն. եւն. բարձրահմուտ ախտաւոր անձինք, թէ՝ քառորդ դարի ի վեր իմ հրատարակած բազմաթիւ մանկավարժական և գրական գործերովս, հասուցած դունդադունդ աշակերտներովս որոնք ազգին պատուաբեր զաւակներ եղած են՝ այսչափ վկայութիւններով կրնամ՝ կրցած եմ հասատալ յաչս հայ ազգին մէջ վարժապետական ինչ կարգ ինչ արժանիք ունիմ եւ թէ՝ հետեւաբար բնաւ պէտք չունիմ արդի Պատ. Ուսումն. Խորհրդոյ գնահատութեան եւ վկայագրին։

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱԶԳ.

Տոմարակալութեան, թուրքերէնի ու առեւտրական թղթակցութեան հմուտ, և մաքսի վերաբերեալ գործողութեանց ձեռնհաս երիտասարդ մը, ըստ ամենայնի երաշխաւորեալ, պատրաստ է մայրաքաղաքիս մէջ կամ ի գաւառս պատուաւոր վաճառականի մը քով պաշտօն ընդունիլ։

Դիմել Արեւելքի խմբագրատունն։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Եգիպտական խնդրոյն առթիւ Զահմ. Ահմէտ Մուխթար փաշայէ ըսպասուած պատասխանն հասած է, սակայն Սրբ Հ. Տ. Ուոլֆի հետ լինելիք բանակցութիւնը յառաջիկայ շաբաթ աւուր Թողուած են։

— Կ. Պոլսէն հետեւեալ հեռագիրն ուղղուած է առ Պ-ջ- Էֆէնտին.

«Կ. ՊՈԼԻՍ, 11 Մարտ. Մեծ-Եպարքոսը զեկոյց առ Սրբ Տ. Ուոլֆի թէ օսմ. կառավարութիւնն՝ 1885 հոկտեմբերի անգլօ-թրքական պայմանագրոյն զօրութեամբ՝ նկատողութեան կունայ առնուլ անպիսի առաջարկներ միայն որք վերաբերին եգիպտական բանակին վերակազմութեան օրուն պէտք է յաջողէ անգլ. զօրաց հեռացումն յեգիպտոսէ։ Բրիտանական բարձր գօմիսէրը պատասխանեց թէ եգիպտոսի հարաւային սահմանագլխոց խաղաղութիւնն ապահովեալ է այլ ևս, թէ ներքին բարեկարգութիւնը վերահաստատուած է և թէ հետեւաբար եգիպտոսի անգլօ-թուրք պատուիրակաց պաշտօնը կրնայ վերջացած նկատուիլ, հետեւաբար և պէտք է անյապաղ ի գլուխ հանել այն վարչական և երկրագործական բարւոքումներն որք յաջողութեամբ սկսան։ Մեծ Եպարքոսը պնդեց իւր առաջին յայտարարութեանց վրայ, յարելով թէ անգլ. զօրաց Եգիպտոսէ հեռացման թուականն որոշուելու է նախ, յետ օրոյ միայն կրնայ սկսիլ վիճաբանութիւնն այն ծանր խնդրոց որք Սրբ Տ. Ուոլֆի առաջարկութեանց հիմունքը կը կազմեն։»

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Ասիական երկաթուղեաց շինութեան համար Պ. Սիֆէլտերի պատրաստած ծրագիրը վերջին վեհ. Սուլթանին մատուցուեր է։

Սոյն երկաթուղեաց խնդրոյն համար Պ. Տոնոն երկէ Փարիզէ հեռագիր մ'ուղղելով Բ. Դրան, ծանուցած է թէ շինութեանց պայմանագրութեան ըստ որ 400,000 ոսկի պիտի վճարուի ըստ պայմանագրութեան, և թէ մեացեալ 600.000 ոսկւոյ վճարման պայմանաժամն ևս յետոյ պիտի որոշուի։ Բ. Դուռն՝ ի պատասխանի՝ հեռագրաւ հարցուցած է թէ մեացեալ 600,000 ոսկւոյ վերջնական պայմանաժամն երբ պիտի լինի և թէ ո՞յր են իւր կազմած գրամատարց խմբի անդամք։

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍԵՐ

Մայրաքաղաքիս գերման դաղթականութիւնն այս տարի արտասովոր շքով կատարեց Վիլհէլմ Կայսեր ծննդեան տարեդարձը։ Դեսպանատան մէջ կատարուած ընդունելութիւնները ծանուցինք երէկ։ Կայսերազուն Իշխան Բարձր. Սէլիմ էֆէնտի՝ որ Միւնիր և Մէհմէտ փաշայից հետ դեսպանատուն գնացած էր իւր Վեհ. Հօր շնորհաւորութիւններն յայտնելու, մեծ պատուովք ընդունուեցաւ Տիկին Բատովիձի դահլիճն մէջ ուր ներկայ էին դեսպանատան գլխաւոր պաշտօնեայքը և Թուրքիոյ ծառայութեան մէջ գտնուող գերմանացի սպայք։ Բարձր. Սէլիմ էֆէնտի՝ ֆրանսերէն հակիրճ ճառ մը կարդաց որուն համառօտիւ պատասխանեց դեսպանը, խնդրելով Կայսերազուն Իշխանէն յայտնել իւր Օգոստ. Հօր թէ ինք (դեսպանն) մեծապէս գոհացած է այս սիրալիր արտայայտութեան համար և թէ բարեբաստ պիտի լինի հաղորդելով զայն իւր Վեհապետին և կայսերական Դերդատանին։

Երեկոյին հարիւր յիսունի չափ հրաւիրեալք, մեծաւ մասամբ գերման դաղթականութեան երեւելիք, թէվֆիկի սրահին մէջ կը համախմբուէին փառաւոր սեղանի մը շուրջին որուն կը նախագահէր Պ. տր Բատովիձ։ Սրահին մէջ կը բարձրանար, կերպ կերպ բոյսերէ ու ծաղիկներէ կազմեալ բարձրաւանդակի մը վրայ, Վիլհէլմ Կայսեր կիսարձանը, դալիներով շրջապատեալ։ Դիմուն վրայ կար փառաւոր պըսակ մը մանիշակներէ և բիւրաւոր ըսպիտակ ծաղիկներէ հիւսուած որք ծերունի վեհապետին տարիքը ցոյց տուող թուանշանը կազմած էին։ Աջ ու ձախ կողմերը կը գտնուէին Պիզմարք իշխանին և Մոլթքէ մարշալին կիսարձաններն և անոնց դէմ, սրահին միւս ճակատը, գահաժառանգ իշխանի կիսարձանն։ Ամենուրեք կը նշմարուէին Գերմանիոյ ազգային դրօշակն ու զինանշանները՝ պարսկական ծանրագին գորգերու վրայ յարդարուած։ սեղանին գլխաւոր զարդը կը կազմէին գեղեցիկ կողմնակներ լի անմոռուկով (ՆՈՏՈՒՇԿԱ) որ կայսեր սիրելի ծաղիկն է։ Իւրաքանչիւր հրաւիրեալ իւր կուրծքը կը կը-ռէր փոքր փունջ մ'այդ ծաղիկն։ Սեղանի ճակատը բազմեցաւ գերմանական դեսպանն, աջ կողմն ունենալով Սդարլս փաշան ու ձախ կողմը Պ. Ալպերդ, նախագահ Թէվֆիքիայի վարչութեան։ Սեղանն սկսաւ երբ ժամ 7ին և տեւեց երեք ժամ, որոյ միջոցին նուագածուաց խումբ մ'ընդմիջարար կը նուագէր գերմանական ազգային երգնակներ, նախ և առաջ նուագելով Համիտիէ քայլերգն որոյ միջոցին բոլոր հանդիսականք յոտին կանգնեցան ի յարգանս օսմանեան վեհապետին։

Ճաշի միջոցին, Պ. տր Բատովիձ ընտիր բանախօսութիւն մ'արտասանեց, բացատրելով այդ ազգային հանդիսին նշանակութիւնն և նկարագրելով ծերունի Կայսեր փառաւոր կեանքն որ ամբողջովին նուիրեալ է Գերմանիոյ միութեանգործին։ Անտեսանն յիշեցուց թէ ճիշդ 1797ին էր որ Շիլլէր՝ ազգային բանաստեղծը գրական թերթի մը մէջ տասնաւորներ՝ կը հրատարակէր իւր սրանչացումն յայտնելով Գերմանիոյ նկատմամբ, բայց տխրութեամբ յարելով թէ ոչ ուրեք կը գտնէր անոր փառքն։ Այդ տարին ծնաւ Վիլհէլմ Գ. որ սահմանեալ էր վերակենդանացուցել գերման կայսրութիւնն և յառաջ բերել ինչ որ Շիլլէր ի զուր փնտռած էր՝ միացեալ և զօրաւոր Գերմանիա մը, որ սիրուէր իւր ժողովրդէն և յարգուէր օտարներէն։ Արդի սիրեցեալ Վեհապետն ոչ միայն միացուցեալ Գերմանիա մը ստեղծած է այլ և խաղաղասէր Գերմանիա, կայսրութիւն մը որ խաղաղութիւն կը փափաքի իրեն համար և համայն աշխարհի համար։ Դեսպանն իւր բանախօսութիւնն աւարտեց բաժակ առաջարկելով վասն Վիլհէլմ Կայսեր որոյ կեանքն երաշխաւորութիւն մ'է, ըսաւ, խաղաղութեան պահպանման։ Այս բաժակ պարպուեցաւ որոտնդոտ ծափահարութեանց մէջ տեղ։ Բանի մը վայրկեան յետոյ Պ. Ալպերդ ոտքի ելնելով կարդաց շնորհաւորական հեռագիր մը զոր Պ. տր Բատովիձ պիտի յղէր առ Կայսրն։ Այս հեռագիրը ընդունելով ջերմագին ծափահարութեամբ, ուղղուեցաւ անմի ջապէս։ Սեղանը վերջացած չէր տակաւին, երբ նամակ մը բերին Պ. Ռիտէրէ, տնօրէն Ա.ժանսի հեռագրական գործակալութեան որ կը փութար հաղորդել Պերլինի հեռագիրն (զոր հրատարակեցինք երէկ) գիտնալով որ այդ հեռագիր մասնաւորապէս կը հետաքրքրէր գերման գաղթականութիւնը։ Դեսպանն ու բոլոր ներկայք մեծ գոհունակութիւն զգացին ֆրանսական գործակալութեան մը ներկայացուցչին կողմէ ցոյց տրուած այս ազնիւ հոգածութեան համար։

Կէս գիշերուն մօտ, դեսպանը՝ քանի մը պաշտօնատարաց հետ մեկնելով Թէվֆիքիայէն, Հանվերսեր-Վէրէն գերման ընկերակցութեան կեդրոնատեղին գնաց ուր հարիւրաւոր գերմանացիք հաւաքուած բաժակներով ու երգերով կը ողջունէին իրենց Վեհապետի ծննդեան 90 րդ տարեդարձը։ Պ. տր Բատովիձ անդ ևս բանախօսութիւն մ'արտասանելով, բաժակ առաջարկեց իւր Վեհապետին կենաց և ժամու մը չափ մնալէ յետոյ մեկնեցաւ. իսկ հանդիսականք մնացին մինչեւ առաւօտ, պարելով ու երգելով ցնծագին։

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Պոլսոյ Իրաւաբանական Վարժարանի այս տարուան հայազգի շրջանաւարտք են՝ Աճէմեան Գրիգոր, Սիմոնեան Խնդիր, Աւագեան Ազիզբանդր, Բիւզանդ, Դարտաչեան Յովհաննէս և Պէքիւարեան Գէորգ էֆէնտիներն որք Լիսոնէ ա Տ-ոյի վիլայեան ստացած լինելով, կամ դատական պաշտօնեաներու պիտի կոչուին և կամ իբր առաջին կարգի փաստաբան՝ կարող պիտի լինին դատավարել օսմանեան դատարանաց առջեւ։

ՏԱԼԻԼԻԵՑԻ ԱՐՔԻԵՊԻՍԿՊՈՍ

Նախորդ թուով մը ծանուցինք թէ Թրէնտ ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէր կալուածատրոց դիւանի պաշտօնէից վրայ, յայտարարելով որ սոքա կը մերժեն ընդունիլ ներքին փոխառութեանց արձէվղիոց կտրոնները ի հաշիւ 303 տարւոյ։

Արդ, այս աւուր թուրք լրագրաց մէջ հրատարակեալ պաշտօնական ազդ մը, նկատողութեան առնելով Թրէնտի սոյն գիտողութիւնը, կը ծանուցանէ թէ արդէն բարձրագոյն որոշմամբ Տալիլիէի արձէվղիոց ամէն տարւոյ կտրոններն, պայմանաժամը լրացած լինի թէ ոչ, նոյն տարւոյ տրոց ի հաշիւ պիտի ընդունուին եւ թէ այս որոշում ցարդ կը գործադրուի։ ուստի, ըստ այս որոշման, վերոյգրեալ արձէվղիոց թէ ներկայ 303 տարւոյ եւ թէ նախորդ տարիներու վերաբերող կտրոնք նոյն տարւոյ տրոց ի հաշիւ պիտի ընդունուին եւ եթէ կալուածատրոց դիւանը սոյն որոշման հակառակ շարժի, ձեռնհաս իշխանութիւնը պէտք եղած միջոցները ձեռք պիտի առնու զայդ արգիլելու համար։

Սանիլէի երկրորդ աստիճան արքունեաց սեղանաւոր ժորժ Ծանէթօ էֆէնտի։

— Պարսկական կառավարութիւնն Առիւծու և Արեգական պատուանշանի երկրորդ աստիճանը նուիրեց գաղթականաց ընդհ. վարչութեան դեր-նախագահ Պէհճէդ պէյի։

—Հանրօգուտ շինութեանց և Առեւտրական նախարարութիւնը ծանուցած է առ որ անկ է, թէ վաճառականը երբ որ և է պաշտօնագիր մը ներկայացնէ կառավարական պաշտօնատանց, ըստ օրինի պարտին այդ պաշտօնագրերու ներքեւ գրել իրենց անունը, մականունը, բնակավայրը, իրենց վաճառականութեան տեսակը, այն կարգը որուն կը պատկանին վաճառականութեան դասուն մէջ և Առեւտրական սենեկի կողմէ իրենց տրուած վկայագրի թիւը։

— Երէկ աւստրիական շոգենաւով մայրաքաղաքս ժամանեց Եէմէնի նախորդ կուսակալ և զինուորական հրամանատար Ֆէրիզ Ահմէտ Ֆէյզի փաշա որ տասն-հինգ տարիներէ ի վեր այդ կողմերը կը գտնուէր։ Նոյն շոգենաւը Եէմէնէ բերաւ նաեւ 370 արձակեալ զինուորներ։

—Ծովային նախարար Հասան փաշա հիւանդ լինելով իւր պաշտօնատեղին բացակայ կը գտնուի քանի մ'օրէ ի վեր։

— Պրուսայի կեդրոնական Միւֆթի Ապտիւլքերիմ էֆ. մեռաւ։

—Դատական տրոց նոր օրինաց համաձայն, կոնդագրոց տուրքը բարեփոխուած է և յետ այսորիկ հաղորդուած պահուն 10 ղշ պիտի առնուի իւրաքանչիւր կոնդագրէ, որոյ վրայ փակցուած դրոշմաթղթի գինն ևս պիտի վճարէ դատին տէրը։

—Երեւելի ռուս հրապարակագիր Պ. Կաշքոֆի սրդին նախընթաց օր մայրաքաղաքս եկաւ և Բերա, անգլ. պանդոկն իջեւանեցաւ։

—կը յիշուի թէ իբր մէկ ամիս առաջ բաղաքագիտական — դիտական յանձնախումբ մը զրկուեցաւ դէպ ի Թուրքս - եգիպտական սահմանագլուխն, ըստ ոմանց հին քաղաքի մը հետքերն և ըստ այլոց՝ ոսկւոյ հանքեր գտնելու համար։ Կերեւի թէ այդ յանձնախմբի պաշտօնն էր Թուրքս-եգիպտական սահմանագլուխը գծել Հիճազի կողմ։ Այս մասին հետեւեալը կը կարդանք Էլ-Դոճիէ լրագրոյն մէջ որ ընդհանրապէս լաւ տեղեկութիւն ունի իսլամական ակմրոց մէջ անցած դարձածներուն վրայ։

«Հիճազի ճամբուն վրայ, Թուրքս-եգիպտական սահմանագլխոյն քանի մը մասերը ժամանակէ մ'ի վեր երեսի վրայ թողուած են եգիպտացի զօրաց կողմէ որք կը ներեն որ կատարեալ անիշխանութիւն տիրէ անդ։ Բարեկարգութիւնը վերահաստատելու համար օսմ. զօրքերը սահմանագլխոյն այլ և այլ կէտերը դրաւեցին, ի մէջ այլոց էլ Ուէճա (Էլ Վէճ), որ ռազմագիտական կարեւոր կէտ մ'է։ Այս կերպով ուրիշ անկարգութեանց առաջքը պիտի առնուի և պիտի պաշտպանուի խլամութեան նուիրական վայրաց, այն է Մէքքէի ուղին։»

